ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№__3327-Ա___ « 20 » օգոստոսի 2025 թ.

ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2019 թվականի փետրվարի 27-ի հ. 518-Ա որոշման պահանջները.

1. Հանձնարարել.

1.1 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը՝ կազմակերպել և ապահովել սույն որոշման հավելվածի ժամանակացույցին համապատասխան հարյուր տոկոս՝ Երևան քաղաքին սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթների անցկացումը և հաստատված ժամանակացույցի համաձայն՝ մրցույթներ անցկացնելու մասին հայտարարությունների հրապարակումը՝ http://www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, ինչպես նաև ապահովել մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիներից դիմումների և դիմումին կից ներկայացվող այլ անհրաժեշտ փաստաթղթերի ընդունումը և մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացումը:

1.2 Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչությանը՝ ապահովել սույն որոշմամբ հաստատված հավելվածի ժամանակացույցին համապատասխան հայտարարությունների հրապարակումը Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում (www.yerevan.am):

2. Ընդունել ի գիտություն, որ մրցույթներն անցկացվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոց, հ. 1 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի խորհրդակցությունների անցկացման հ.1 դահլիճում և մրցույթներին

մասնակցելու ցանկություն ունեցող անձանց փաստաթղթերն ընդունվելու են Երևանի քաղաքապետարանի Արգիշտիի փողոց, հ.1 հասցեում գտնվող վարչական շենքի հ.212 սենյակում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչությանը:

4. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված՝
Երևանի քաղաքապետի
20.08.2025 թվականի

Հ. 3327-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ՝ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

h/h	**Փակ բաժնետիրական ընկերության անվանումը**	**Մրցույթ անցկացնելու օրը և ժամը**
1.	«Թիվ 4 պոլիկլինիկա» ՓԲԸ	24.09.2025թ. ժամը՝ 11.00
2.	Երևանի «Դավթաշեն» առողջության կենտրոն ՓԲԸ	24.09.2025թ. ժամը՝ 11.00
3.	«Մալաթիա-Սեբաստիա առողջության կենտրոն» ՓԲԸ	24.09.2025թ. ժամը՝ 11.00
4.	Երևանի «Քանաքեռ-Զեյթուն» առողջության կենտրոն ՓԲԸ	26.09.2025թ. ժամը՝ 11.00
5.	Երևանի «Նոր Նորք» առողջության կենտրոն ՓԲԸ	26.09.2025թ. ժամը՝ 11.00
6.	Երևանի «Կարմիր Բլուր» առողջության կենտրոն ՓԲԸ	26.09.2025թ. ժամը՝ 11.00

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**